

ՀՐԱԶԴԱՆԻ ՊՐՈՒԼԵՄԸ

Համաձայն մեր սեպտեմբերական կառուցվածքի և ստորագրության նախագիծը, Հրազդան գետի վրա արդեն գործող հիդրոէլեկտրակայաններից բացի, վեցերորդ հնգամյակի ընթացքում կառուցվելու և շահագործման են հանձնվելու Սևան—Հրազդան կասկադի գծուս շիրակահանգի վրա հիդրոէլեկտրակայանները, այդ թվում՝ Երևանի, Արգավանդի, Նորագավթի հիդրոէլեկտրակայանները (Արզնի և Աթարբեկյան հիդրոէլեկտրակայանները գտնվում են կառուցման պրոցեսում):

Երևանի հիդրոէլեկտրակայանը կառուցվելու է առաջին Երզնից վերև, որի գործարկման համար ջուրը պետք է վերցվի Փանաքեղեւի մոտից: Արգավանդի հիդրոէլեկտրակայանը կառուցվելու է Ստալինյան շրջանում և Հրազդանից ջուր է վերցնելու մասնակիան երկաթգծի առաջին կայարանի մոտից: Սևան—Հրազդան կասկադի վերջին հիդրոէլեկտրակայանը նորագավթին է: Հրազդանի ձորի այդ մասում կառուցվելու է բավական բարձր ջրապատեղի ամբարտակ, Վերջինիս կառուցմամբ այդ շրջանում ըստեղծվելու է մի մեծ ջրամբար, որը և ջուր է մատակարարելու Նորագավթի հիդրոէլեկտրակայանին:

Ինչպես պարզ երևում է, վերը թված հիդրոէլեկտրակայաններից երկուսը՝ նոր Երզնես ու Արգավանդեղեւ, տեղադրվելու են մեր մայրաքաղաքի սահմաններում, իսկ այդ նշանակում է, որ հիշյալ կայանների գործարկմամբ Հրազդան գետի ջուրը իր հին հունից—ձորից, դուրս կբերվի և մեծ մասամբ, բերև ամբողջությամբ, կտարվի նոր հունով— Բուճակեղով:

Նկատի ունենալով Հրազդան արագահոս գետի և նրա հովտում ձորի նշանակությունը մայրաքաղաքի բնակչության համար, հատկապես ամռան շոգ օրերին, Հայդիդեյի ինժեներները Երևանի քաղաքի մոտ ճարտարապետների գիտություններ և համագործակցությամբ մշակել են մի նախագիծ՝ Համաձայն այդ նախագծի, Հրազդանի ձորը չպետք է թողնվի ցամաք, անկարգ վիճակում. նրանք՝ նախագծողները, որոշել են ձորում կառուցել միմյանցից ոչ հեռու դասավորված մի շարք փոքր շահի ամբարտակներ, որպեսզի Երզնեսի գլխամասից բաց թողնվող նույնիսկ փոքրաքանակ ջուրը (2 խոր. մետր մեկ վայրկյանում) կաշկանդվելով հիշյալ ամբարտակների առջև՝ առաջացնի հաջորդաբար իջնող ջրի հայելիներ՝ ջրավազաններ:

Նախագծի հեղինակները բացատրում են, որ եթե ջրավազաններում ժամանակի ընթացքում կուտակվող տիղմն ու ավազը սխտեմատիկաբար մաքրվի, ապա ձորում նույն զուլումբյունը կլինի, ինչպես որ այժմ: Սակայն շատ անվանի մասնագետներ Գերասիմովից թվում են վերաբերվում այդ միջոցառմանը, ելնելով այն համոզմունքից, որ ինժեներական արհեստական արգելափակումների առկայությամբ էլ վերահիշյալ ավազանների միջոց բարեկարգ և դործող վիճակում պահելը կապված կլինի մեծամեծ դժվարությունների հետ:

Ո՞վ կարող է պնդել, որ հորդ անձրևներից առաջացած հեղեղները և ավազների զանազան նստվածքներն ու վերվածքները հաճախ չեն լցնելու ջրավազանները մեծաքանակ տիղմով ու քարերով: Զե՛ որ դրանք մաքրելու համար անհրաժեշտ կլինեն բազմաթիվ էքսկավատորներ, ավտոմեքենաներ, աշխատավոր ձեռք, ինչպես և զգալի գումար: Ենթա հնարավոր է, որ ստեղծվի այնպիսի դրություն, երբ մի քանի կի-

լոմետր ձգվող ավազանների հակառակահաստեմբ շարդարացնի իրեն, շարքից դուրս գա, իսկ Հրազդանի ձորը, երևանցիների ամենախրած և գրեթե միակ հանգստավայրը, մնա անջուր, ցամաքած, անկարգ ու անմաքուր, հասանելիության վիճակում:

Երևան քաղաքի հաստատված գրեթե շատակազմի համաձայն, Հրազդանը չի շրջանցում քաղաքը, այլ անցնում է նրա միջով: Երբաղստովան զգալի միջոցներ է ներդնում Հրազդանի երկու կողմերի թաղամասերը կապող բարձրադիր և լայնաթիղ կամուրջների կառուցման, և ընդհանրապես, Հրազդանի կիրճի բարեկարգման գործում. և դա շատ բնական է: Աշխարհի գրեթե բոլոր մեծ քաղաքները միշտ էլ գետերը վերցրել են իրենց մեջ, անսպասան կառուցապատելով նրանց երկու ափերը:

Հրազդանի գետն ու ձորը Երևանի կլիմայի բարելավման, տոթի մեղմացման վերին աստիճանի կարևոր գործոններից են և հենց այս առումով նրանց բախտը լուրջ քննության արժանի մի խնդիր է:

Հարցանքի տակ է նաև նախատեսված ընդարձակ ջրամբարի ստեղծումը. չէ՛ որ այն կապված է մեծ ամբարտակի կառուցման հետ, իսկ վերջինս տեխնիկապես (գեոլոգիական և այլ տեսակետներից) դեռևս հիմնավորված չէ: Ոչ մի կերպ չհամաձայնելով Հրազդանի ձորն անկարգ վիճակի մատնելու հետ, մեր համոզմամբ խնդրին պետք է տալ հետևյալ պարզ լուծումը. արհեստական փոքր ամբարտակների և ջրամբարների սխտեմբ համարելով փել համոզել, ավելի ճիշտ՝ փել էֆեկտիվ, Երևանի սահմաններում, առնչազն Արարկիլի կամուրջից մինչև էլմիածին տանող փոքր կամուրջը, Հրազդան գետը թողնել անձեռնմխելի, այնպես, ինչպես կա Սա նշանակում է՝ Երևանի նոր հիդրոէլեկտրակայանը կառուցել ոչ թե հին Երզնեսի, այլ Արարկիլի նոր կամուրջի մոտ, իսկ Արգավանդի հիդրոէլեկտրակայանի իր ջուրը վերցնել ոչ թե Մանակիան երկաթգծի առաջին կայանի, այլ էլմիածնի կամուրջի մոտ:

Որոշ էներգետիկներ և հիդրոտեխնիկ ինժեներներ գտնում են, որ այդ դեպքում կորչում է ջրի զգալի բարձրություն, այսինքն՝ ապագայում ստանալիք էներգիայի որոշ քանակ: Որևէ բան կորած է համարվում այն դեպքում, երբ նրա ձեռք բերման համար գործադրված է աշխատանք և ծախսված է որոշ գումար: Այլապես, աշխարհի բոլոր գետերի հոսող ջրերը վաղուց ի վեր պետք է զերծա համարվեն:

Սակայն սա հարցի մի կողմն է: Քանի որ հիշյալ երկու էլեկտրակայաններն իրենց բոլոր կառուցվածքներով տեղադրվելու են քաղաքի սահմաններում, ուղղակի նրա կենտրոնական մասում, ապա այս դեպքում կարևորն ու որոշիչն աշխատավորների կենսական շահերն են:

Այս հոդվածով մենք լայն հասարակայնությանը քննության ենք ներկայացնում Հրազդան գետի շատ կարևոր պրոբլեմը:

Մենք գտնում ենք, որ Գիտությունների ակադեմիայի Զրախնայողական հիմնադրամի ընկերները և Հայդիդեյի նախագծող ինժեներները կվերանայեն քաղաքի սահմաններում կառուցվելիք հիդրոէլեկտրակայանների տեղադրման նախագծերը (որոնք, ի դեպ, գտնվում են մշակման պրոցեսում), նրանց նոր, ավելի նպատակահարմար և ռադիոնալ լուծում տալու նպատակով:

S. ՄԱՐՈՒԹՅԱՆ
Ճարտարապետ